12 ապրիլի 2023թ.

Թիվ 01/1 - 93

Հաշվետվություն 03

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
Մարտին Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան,

Համաձայն «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04 գլուխ 23-ի, կից ներկայացնում ենք էական փաստերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 2 թերթ

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Հակոբ Անդրեասյան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ / "ACBA BANK" OJSC
Կենտրոնական գրասենյակ
Head Office

+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am

ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA

Սույնով տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի 2023 թվականի տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենա 2023 թվականի ապրիլի 27-ին սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ՝ «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» ("FOODPARK BY DOWNTOWN") վայրում, ժամը 15:00-ին: Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն կունենան մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին և քվեարկել հատուկ նախատեսված կապի միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Ընդհանուր ժողովին մասնակցելու և տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք կունենան ԱԿԲԱ Բանկի բոլոր այն բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2023 թվականի ապրիլի 11-ի ժամը 17:00-ի դրությամբ ընդգրկված կլինեն Բանկի բաժնետերերի ռեեստրում: Շահութաբաժինների չափի և վճարման մասին վերջնական որոշումը կընդունվի ընդհանուր ժողովի կողմից:

Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը և անհրաժեշտ տեղեկատվությունը ԱԿԲԱ Բանկի բոլոր բաժնետերերին կուղարկվի ապրիլի 12-ին՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

Սույնով տեղեկացնում ենք, որ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ Նախագահի 22/03/2023թ. թիվ 1/113 Ա որոշումը և ղեկավարվելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրությամբ՝ ս.թ. ապրիլի 6-ից սկսվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Ավան» մասնաճյուղի գործունեությունը ՀՀ, ք. Երևան, Ավան, Մ. Խուդյակովի փողոց 210/2 հասցեում: